

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2015

Ստեփանակերտի քաղաքապետարանի
գործունեության

2015 թվականին ԼՂՀ Ստեփանակերտի քաղաքապետարանն իր գործունեությունն իրականացրել է ԼՂՀ սահմանադրության, «ԼՂՀ շրջաններում պետական կառավարման մասին» ԼՂՀ Նախագահի հրամանագրի և «Տեղական ինքնակառավարման մասին» ԼՂՀ օրենքի հիման վրա:

Քաղաքապետարանի 2015 թվականի գործունեության համար գլխավորապես ծրագրային հիմք են հանդիսացել՝

- ԼՂՀ Նախագահի նախընտրական ծրագիրը,
- ԼՂՀ կառավարության գործունեության ծրագիրը,
- ԼՂՀ կառավարության 2015 թվականի գործունեության

միջոցառումների ծրագիրը:

Հաշվետու ժամանակաշրջանում քաղաքապետարանի կողմից իրականացվող գործունեությունն ուղղված է եղել բնակչության բարեկեցության բարելավման նպատակով համայնքային նշանակության հարցերի լուծմանը և համայնքի սեփականության տնօրինմանը:

Քաղաքապետարանի կողմից իրականացված միջոցառումները միտված էին օրենքով նախատեսված պարտադիր և պետության կողմից պատվիրակված լիազորությունների իրականացմանը հետևյալ բնագավառներում՝

- ֆինանսներ,
- քաղաքաշինություն և կոմունալ տնտեսություն,
- հողօգտագործում,
- տրանսպորտ,
- աշխատանք և սոցիալական ծառայություն,
- առևտուր և ծառայություններ,
- հասարակական կարգի պահպանություն,
- պաշտպանություն,
- քաղաքացիների և տնտեսվարող սուբյեկտների իրավունքների պաշտպանություն,
- կրթություն, մշակույթ, երիտասարդության հետ տարվող աշխատանքներ,
- ֆիզիկական կուլտուրա և սպորտ,
- արտաքին կապեր:

Ֆինանսներ

Ստեփանակերտի քաղաքային համայնքի 2015 թվականի տարեկան բյուջեի ընդհանուր մուտքերը կազմել են 1 մլրդ 766 մլն 913.0 հազ.դրամ՝ պլանավորված 1 մլրդ 833 մլն 37.6 հազ.դրամ գումարի 96.4%-ը: Ընդհանուր մուտքերի 21.1%-ը կազմել են սեփական եկամուտները, որոնց գծով պլանավորված 408 մլն 697.3 հազ.դրամի դիմաց հավաքագրվել է 373 մլն 300.3 հազ.դրամ: Կատարողականը կազմել է 91.3%: Նախորդ տարվա համեմատ սեփական եկամուտները նվազել են 2 մլն 485.3 հազ.դրամով: Միևնույն ժամանակ, դատական վճիռների համաձայն՝ վճարման է ենթակա 25.0 մլն դրամ:

Շենքերից և շինություններից գանձվող գույքահարկի գծով մուտքերը կազմել են 98 մլն 67.7 հազ.դրամ՝ նախատեսված 115 մլն 490.0 հազ.դրամի 84.9%-ը: Նախորդ տարվա համեմատ մուտքերը նվազել են 12 մլն 40.9 հազ.դրամի չափով (շենքեր և շինությունների մասով 10 մլն 937.5 հազ.դրամի չափով չվճարված գույքահարկի նյութերը գտնվում են դատարանում): Հողի հարկից գանձվող մուտքերը կազմել են 10 մլն 348.8 հազ.դրամ՝ պլանավորված 14 մլն 207.3 հազ.դրամի 72.8%-ը (հողի հարկի մասով 1 մլն 476.6 հազ.դրամի չափով չվճարված հարկի նյութերը գտնվում են դատարանում):

Փոխադրամիջոցներից մուտքագրվել է 128 մլն 2.7 հազ.դրամի գույքահարկ, որը կազմում է պլանավորված 140.0 մլն դրամի 91.4%-ը: Նախորդ տարվա համեմատ այն աճել է 6 մլն 106.0 հազ.դրամի չափով (փոխադրամիջոցների մասով՝ 11 մլն 478.9 հազ.դրամի չափով չվճարված գույքահարկի նյութերը գտնվում են դատարանում):

Տեղական տուրքերի գծով մուտքագրվել է 59 մլն 180.0 հազ.դրամ, որը կազմում է նախատեսված 60.0 մլն դրամի 98.6%-ը: Նախորդ տարվա համեմատ մուտքերը նվազել են 2 մլն 618.0 հազ.դրամով: Պետական տուրքերի գծով մուտքագրվել է 14 մլն 700.0 հազ.դրամ՝ պլանավորված 18 մլն 500.0 հազ.դրամի դիմաց: Կատարողականը կազմել է 79.5%: Այլ հարկային եկամուտների գծով մուտքագրվել է 5 մլն 614.0 հազ.դրամ: Կատարողականը կազմել է 62.4%:

Համայնքի բյուջեի ընդհանուր եկամուտների 78.9%-ը կազմել են պետական բյուջեից տրամադրվող պաշտոնական դրամաշնորհները: 2015 թվականի

տարեկան բյուջեի պլանավորված դոտացիայի և սուբվենցիայի գումարները կազմել են 1 մլրդ 424 մլն 340.3 հազ.դրամ, որից հատկացվել է 1 մլրդ 393 մլն 612.6 հազ.դրամ (կատարողականը կազմում է 97,8%):

Այլ եկամուտների գծով 2015 թվականին մուտքագրվել է 57 մլն 387.1 հազ.դրամ՝ պլանավորված 51 մլն 500.0 հազ.դրամի դիմաց (կատարողականը կազմել է 111.4%): Հողերի վարձակալության մասով համայնքային բյուջեի եկամուտները կազմել են 11 մլն 718.1 հազ.դրամ, պլանավորված 8 մլն 500.0 հազ.դրամի դիմաց (կատարողականը կազմել է 137.9%): Գույքի վարձակալությունից եկամուտների կատարողականը կազմել է 114.7% կամ հավաքագրվել է 5 մլն 736.8 հազ.դրամ՝ նախատեսված 5.0 մլն դրամի դիմաց: Հողամասերի կառուցապատման իրավունքի դիմաց գանձվող վարձավճարների մուտքերը կազմել են 5 մլն 296.3 հազ.դրամ՝ 5.0 մլն դրամի դիմաց (կատարողականը կազմել է 105.9%): Վարչական գանձումներից մուտքերը կազմել են 30 մլն 627.7 հազ.դրամ՝ 24.0 մլն դրամի դիմաց (կատարողականը կազմել է 127.6%), տուգանքներից և տույժերից մուտքերը՝ 2 մլն 268.5 հազ.դրամ, պլանավորված 6.0 մլն դրամի դիմաց (կատարողականը կազմել է 37.%):

Քաղաքային համայնքի 2015 թվականի տարեկան բյուջեի ծախսերը ֆինանսավորվել են 1 մլրդ 770 մլն 907.4 հազ.դրամի չափով, որը կազմում է պլանավորված 1 մլրդ 843 մլն 971.3 հազ. դրամի 96.0%-ը: Համայնքի ենթակայության կազմակերպությունները ֆինանսավորվել են 99.8 %-ով:

Քաղաքաշինություն և կոմունալ տնտեսություն

2015 թվականին ընդունվել է քաղաքաշինության բնագավառին վերաբերող 345 որոշում: Շինարարության նպատակով ֆիզիկական և իրավաբանական անձանց տրամադրվել է թվով 360 թույլտվություն: Նշված ժամանակաշրջանում քաղաքացիներին միաժամանակ տրամադրվել է 162 ավարտական ակտ և քանդման վերաբերյալ թվով 52 թույլտվություն: Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածի և շինարարության ավարտման աստիճանի վերաբերյալ պատրաստվել է 43 տեղեկանք: Հրավիրվել է Ստեփանակերտի վարչական սահմաններում գտնվող ինքնակամ կառուցված շենքերի և շինությունների, ինքնակամ զբաղեցված

հողամասերի իրավական կարգավիճակը որոշող հանձնաժողովի 11 նիստ, որտեղ քննարկվել է 87 հարց: Կայացել է Ստեփանակերտի քաղաքապետարանին կից գործող ճարտարապետական և քաղաքաշինական խորհրդի 8 նիստ, ուր քննության է առվել 50 հարց: 32 նախագիծ մերժվել է և ուղարկվել վերամշակման:

Խստացվել է նախագծերի փորձաքննության գործընթացը: Շինարարության ավարտական ակտերի փաստագրման գործընթացին ներգրավվել են նաև ԼՂՀ քաղաքաշինության նախարարության ներկայացուցիչը և նախագծի հեղինակը:

Քաղաքաշինական գործունեության բնագավառում՝ իրավական ակտերի, քաղաքաշինական փաստաթղթերի նորմատիվ տեխնիկական փաստաթղթերի պահանջների ապահովման նպատակով, հաշվետու ժամանակահատվածում ԼՂՀ քաղաքաշինության նախարարության քաղաքաշինական պետական տեսչության հետ համատեղ Ստեփանակերտ քաղաքում բազմաբնակարան, բազմաֆունկցիոնալ, ինչպես նաև հասարակական նշանակության շինարարություն իրականացնող սուբյեկտներում պարբերաբար իրականացվել են ստուգումներ: Հայտնաբերված խախտումների վերացման ուղղությամբ կապալառուներին տրվել են պարտադիր կատարման հրահանգներ և ցուցումներ: Ստուգումների ժամանակ հայտնաբերված խախտումներն արձանագրվել ու ներկայացվել են վարչական հանձնաժողովի քննարկմանը: Արդյունքում՝ վարչական պատասխանատվության են ենթարկվել թվով 8 իրավաբանական և ֆիզիկական կարգազանց անձինք: Հաստատվել են պետական բյուջեի միջոցների հաշվին իրականացված օբյեկտների շինարարության շահագործման՝ թվով 16 փաստագրման ակտեր: Շինարարության թույլտվությամբ սահմանված ժամկետները խախտած 305 սուբյեկտներ գրավոր ծանուցվել են տրամադրված շինարարության ժամկետների երկարաձգման կամ ավարտական ակտերի ձևակերպման, իսկ 54 սուբյեկտներ՝ շինարարության թույլտվություն ստանալու մասին:

2015 թվականին Ստեփանակերտի քաղաքային համայնքի բյուջեի և պետական բյուջեի հաշվին զգալի աշխատանքներ են կատարվել վերանորոգման, վերակառուցման և բարեկարգման ուղղությամբ: Մասնավորապես՝ իրականացվել են 82 մլն 498.8 հազ.դրամի չափով բազմաբնակարան շենքերի ճակատային մասերի

հարդարման և երեսապատման, սալիկների վերականգնման աշխատանքներ: Վերակառուցվել են Ստեփանակերտի Ս.Դավիթ փողոցի թիվ 11 շենքի տանիքն ու ճակատային մասը, Ազատամարտիկների փողոցի թիվ 37, Վ.Մամիկոնյան փողոցի թիվ 11, Դավիթ Բեկ փողոցի թիվ 3 շենքերի տանիքները, Ազատամարտիկների փողոցի թիվ 31 շենքի պատշգամբները: 38 մլն 581.8 հազ.դրամի չափով գումար է ծախսվել քաղաքի հենապատերի և աստիճանների վերանորոգման ու վերակառուցման համար: Մանկական խաղահրապարակների բարեկարգման նպատակով ծախսվել է 28 մլն 686.4 հազ.դրամ: Ծրագրում ներառվել են Ադմ.Իսակովի թիվ 1ա, Ա.Հեքիմյան թիվ 12, Վ.Սարգսյան թիվ 18, Գ.Լուսավորիչ թիվ 10 շենքերի բակերում և Գալստյան փողոցում նախատեսված խաղահրապարակներն ու տաղավարները: Հիմնանորոգվել է Տերտերյան փողոցի թիվ 1 տան բակում գտնվող խաղահրապարակը:

Հաշվետու ժամանակաշրջանում պատվիրվել են 11654,0 հազ.դրամի նախագծա-նախահաշվային փաստաթղթեր՝ Վ.Սարգսյան փողոցի թիվ 25 շենքում տեղակայված <<ԼՂՀ անհայտ կորած ազատամարտիկների հարազատների միություն>> ՀԿ և <<Ստեփանակերտի մանկապատանեկան մարզական դպրոց>> ՊՈԱԿ ջեռուցման համակարգի կառուցման, Անդրանիկի փողոցի հարակից հենապատերի վերակառուցման, Ադմ.Իսակովի փողոցի թիվ 4ա շենքից՝ Ստարավոյտովա փողոց տանող հեղեղատար կոյուղու ցանցի վերակառուցման նպատակով:

2015թ. բնակարանային խնդիրը մայրաքաղաքում շարունակել է առաջնահերթ մնալ: Հաշվետու ժամանակաշրջանում հրավիրվել է քաղաքապետարանի՝ բնակարանային հարցերով հանձնաժողովի 4 նիստ: Հաշվառման ցուցակում ընդգրկվելու համար դիմում է ներկայացրել 38 քաղաքացի, որից 20-ը բավարարվել է, 18-ը՝ մերժվել: Կայացել է նաև քաղաքացիների հաշվառման և հաշվառումից հանելու հարցերով հանձնաժողովի 43 նիստ, որտեղ քննարկվել է 628 դիմում: Ոչ բնակելի տարածքի հատկացման վերաբերյալ ընդունվել է 11, ուժը կորցրած ճանաչելու մասին՝ 4 որոշում: Համայնքի ավագանու համաձայնությամբ սեփականաշնորհվել է 23 բնակարան, մասնավորեցվել՝ 5

օբյեկտ: Միաժամանակ, վարձակալության մասին թվով 8 պայմանագրերում կատարվել է փոփոխություն:

Իրավունքների պետական գրանցում ստանալու նպատակով հաշվետու ժամանակաշրջանում պատրաստվել և ԼՂՀ կառավարության աշխատակազմի անշարժ գույքի կադաստրի վարչություն է ներկայացվել ու պետական գրանցում ստացել պետական և համայնքային գույք հանդիսացող 89 միավոր: Միաժամանակ, օտարվել է նախկինում կառուցապատման իրավունքով տրամադրված անշարժ գույքի 24 միավոր: Հողամասերի օտարումից համայնքային բյուջե է փոխանցվել 376 մլն 445.0 հազ.դրամ: Հասցեների տրամադրման վերաբերյալ ընդունվել է թվով 502 որոշում:

2015թ. մասնակի բավարարվել են բնակչության պահանջները՝ տների տանիքների վերանորոգման վերաբերյալ: <<Բնակարանային շահագործման տնտեսություն>> ՓԲԸ կողմից բազմաբնակարան շենքերում ընթացիկ վերանորոգման են ենթարկվել 325 բնակարանների տանիքներ: Նախկինում տեղադրված 511զծ/մ ծավալով անձրևաջրահեռացման խողովակներն ու ջրհորդանները փոխարինվել են նորերով: Թվով 139 բազմաբնակարան շենքերում մաքրվել են ծխնելույզներն ու օդափոխիչ ուղիները: Շարունակական բնույթ են կրել բազմաբնակարան շենքերի բակերի և մուտքերի հիմնանորոգման, ինչպես նաև նկուղների սանիտարական մաքրման աշխատանքները: Միննույն ժամանակ մտահոգիչ է մնում նախկինում կառուցված կամ վերափոխված բազմաբնակարան շենքերի տանիքների վրա՝ ձյան պաշտպանիչ շերտերի բացակայությունը, ինչի պատճառով վտանգվում է մարդկանց շարժը բակերում: Գահավիժող ձյան ծանր շերտից վնասվում են որոշ ենթակառուցվածքներ, շարքից դուրս են գալիս լուսատուները, հեռախոսալարերը և այլն:

<<Ստեփանակերտի համայնքային ծառայություն>> ՓԲԸ-ն 2015թ. զգալի աշխատանքներ է իրականացրել համայնքի կողմից մատուցվող կոմունալ ծառայությունների մասով՝ տեղեկատվության խմբագրման, հաշվառման բազայի վարման, ներքաղաքային երթուղիների երթակարգավորման ծառայության, համայնքում հասցեավորման և հասցեների գրանցման գործառույթների վերաբերյալ: Համաձայն հաստատված ֆինանսական պլանի,

ջրամատակարարման-ջրահեռացման ծառայության գծով նախատեսված 340.0 մլն դրամի փոխարեն <<Ջրմուղ կոյուղու>> կողմից հավաքագրվել է շուրջ 369 մլն 159.4 հազ.դրամ կամ առաջադրանքը կատարվել է 108,6 տոկոսով: Աղբահանման ծառայության գծով 137 մլն 912.9 հազ.դրամի փոխարեն հաշվետու ժամանակաշրջանում հավաքագրվել է 126 մլն 835.9 հազ.դրամ /առաջադրանքը կատարվել է 92.0 տոկոսով/: Բնակչահագործման ծառայության գծով՝ 121 մլն 471.6 հազ.դրամի դիմաց հավաքագրվել է 104 մլն 564.1 հազ.դրամ, ինչը կազմում է ծրագրվածի 86.0 տոկոսը:

Ծառայությունն իր գործառույթների շրջանակներում կատարել է նաև հասցեավորման և հասցեների գրանցման հետ կապված աշխատանքներ, ինչը թույլ է տվել բազան համալրել գույքային նոր միավորներով: 2015թ. տրամադրվել է թվով 659 հասցե: Ծառայության շրջանակում կանոնակարգվել ու վերահսկվել է նաև ներքաղաքային երթուղիների աշխատանքային գործունեությունը:

Հաշվետու ժամանակաշրջանում քաղաքապետարանը՝ քաղաքաշինության նախարարության հետ համատեղ մշակել և իրականացրել է <<Ձմեռ>> ծրագիրը: Մայրաքաղաքում ձմռան ամիսներին առատ ձյան պատճառով ակնկալվող դժվարությունները հաղթահարելու, արտակարգ իրավիճակների պայմաններում ձնամաքման ու ձնահեռացման աշխատանքներն առավել ներդաշնակ համակարգելու նպատակով, ստեղծվել է հանձնաժողով, որում քաղաքապետարանի աշխատակիցներից բացի, ընդգրկվել են նաև շինարարական, կոմունալ ծառայությունների, կենսաապահովման մի շարք այլ կազմակերպությունների պատասխանատուներ: Ձեռնարկվել են անհրաժեշտ քայլեր՝ փոխհամաձայնեցված և արդյունավետ գործելու, քաղաքի փողոցներն ու մայրերը, հրապարակները, հասարակական վայրերն առատ ձյան շերտերից հնարավորինս ազատելու, տրանսպորտի անխափան երթևեկությունն ապահովելու համար: Ծրագրի շրջանակներում <<Ձերմային տնտեսություն>> ՓԲ ընկերությունն ապահովել է իր կողմից սպասարկվող կաթսայատների անխափան աշխատանքը: 2015 թվականին նորոգվել են մայրաքաղաքի հ.2 և հ.7 դպրոցների, հ.2 մանկապարտեզի կաթսայատների ջերմուղիները, տեղադրվել են շրջանառու նոր պոմպեր: Հիմնանորոգվել ու վերականգնվել է Վ.Սարգսյան փողոցի թիվ 25 շենքի ջեռուցման

համակարգը: Քաղաքի հ.16 և հ.19 կաթսայատների ջերմուղիները փոխարինվել են նորերով:

2015թ. ուշադրության կենտրոնում են գտնվել քաղաքի սանիտարական մաքրության և աղբահանման խնդիրները: Կենտրոնական աղբանոցում իրականացված արդյունավետ աշխատանքների շնորհիվ տարածքում իրավիճակը զգալիորեն բարելավվել է: Սանիտարական մաքրման և բարեկարգման է ենթարկվել աղբանոցի ողջ շրջապատը, տարիների ընթացքում կուտակված աղբը խտացվել և վնասազերծվել է, ծածկվել հողի հաստ շերտով: Վերանորոգման են ենթարկվել ցանկապատն ու պահակատունը, իրականացվել են վնասազերծման այլ աշխատանքներ: Քաղաքի տարբեր թաղամասերում կառուցվել են նոր և հիմնանորոգվել՝ թվով 10 աղբահարթակներ: Ձեռք են բերվել ու տեղադրվել թվով 100 մեծ և 40 փոքր ծավալի աղբարկղներ: Հաջողությունների հետ մեկտեղ, կազմակերպությունում դեռևս չլուծված խնդիրներ կան: Հիմնարկության ավտոտնտեսությունը թարմացման խիստ կարիք ունի: Աղբահավաք կողաբարձիչ <<ԳԱԶ-3307>>, ձնահավաք-աղցան <<ԿԱՄԱԶ>> կամ ԶԻԼ-ՄԴԿ մակնիշի ավտոմեքենաների, ինչպես նաև բազմաբնակարան շենքերի բակերի և մայթերի ձյունը հավաքող մինի տրակտորների ձեռքբերումն առավել արդյունավետ կդարձնե մայրաքաղաքի սանմաքրման և աղբահանման աշխատանքների կազմակերպումը:

2015թ. <<Ջրմուղ կոյուղի>> ՓԲԸ գործունեությունը նպատակաուղղված է եղել Ստեփանակերտ քաղաքի բնակչության ջրամատակարարման և կոյուղու ցանցերի սպասարկման ծառայության որակի բարձրացմանը, ինչպես նաև գործող անձրևնդունիչների աշխատունակության ապահովմանը: Հատկանշական է, որ այսօր քաղաքի բնակչության գրեթե 100 տոկոսը ապահովված է շուրջօրյա ջրով: Ջրացանցի կառուցման աշխատանքները կշարունակվեն Աջափնյակի և Կրկժան թաղամասի որոշ հատվածներում ու ավարտին կհասցվեն 2016 թվականին:

Բնակլիմայական պայմանների տեսանկյունից չնայած տարին անբարենպաստ էր, չորային, այնուամենայնիվ, ընկերությանը հաջողվել է աննախադեպ երկարատև երաշտի պայմաններում ապահովել ջրի անխափան մատակարարումը բնակչությանը: Մեծածավալ աշխատանքներ են իրականացվել

շուրջօրյա ջրամատակարարման և կոյուղու ցանցերի վթարների վերացման ուղղությամբ՝ ինչպես ներքաղաքային ջրացանցում, այնպես էլ ներքաղաքային կոյուղու ցանցում, կոյուղու և բազմաբնակարան շենքերի կոյուղագծերի և ջրամատակարարման ներքին ցանցերում: Ջրի որակի ապահովման նպատակով լաբորատորիայի կողմից իրականացվել են թվով 100 առողջարարական միջոցառումներ: Ամառային ամիսներին, լրացուցիչ կազմակերպվել է ինչպես ՕԿՁ-ի, այնպես էլ՝ աղբյուրների ամենօրյա ախտահանում և վարակազերծում: Տարվա ընթացքում, ըստ ժամանակացույցի, նմուշահանվել և հետազոտվել են <<Վարարակն>>, <<Մեղրագետ>>, <<Թրագետ>> գետերի ջրերը, ախտահանվել ու վնասազերծվել են սկունքները: Հաշվետու ժամանակաշրջանում ընկերության միջոցներով իրականացվել են ավելի քան 57.0 մլն դրամի հիմնանորոգման և ընթացիկ նորոգման աշխատանքներ:

Միևնույն ժամանակ, ընկերությունում խնդրահարույց հարց է մնում ավտոտնտեսության համալրումը նոր տեխնիկայով: Մասնավորապես քաղաքի կոյուղու համակարգը ենթակա է վերակառուցման: Մի շարք թաղամասերում և փողոցներում ընդհանրապես բացակայում են կոյուղագծերը, ինչը լրջորեն վտանգում է շրջակա տարածքների սանիտարական վիճակը:

Տարին արդյունավետ է եղել <<Ակադեմիկոս Թախթաջյանի անվան բուսաբանական այգի>> ՓԲԸ համար: Քաղաքի տարբեր փողոցներում ու թաղամասերում իրականացվել են կանաչ գոտիների և տարածքների սանիտարական մաքրման աշխատանքներ: 2015թ. նախորդ տարվա համեմատ կանաչ գոտիներն ընդլայնվել են ավելի քան 1600 քառ.մետրով: Հաշվետու ժամանակահատվածում իրականացվել են ոռոգման ցանցերի ընդլայնման, նորերի ստեղծման լայնածավալ աշխատանքներ, ինչը նպաստել է կանաչ տարածքների բարելավմանը: Ընդհանուր առմամբ, մայրաքաղաքում տնկվել է տարբեր տեսակի թվով 930 ծառ: Միզամարգերում կատարվել է ավելի քան 670 հազար ծաղիկների սածիլների տունկ: Միամսյակի շրջանակներում ծառատնկման ու սանիտարական մաքրման ուղղությամբ լայնածավալ աշխատանքներ են կազմակերպվել <<Աջափնյակ>> և <<Արեշ>> թաղամասերում: Քաղաքապետի որոշմամբ

ընկերության կողմից իրականացվել է 135 ծառահատում: Ձևավորվել է 380 ու երիտասարդացվել՝ թվով 100 ծառ:

2015թ. <<Արցախի ենթագո>> ՓԲԸ Ստեփանակերտի մասնաճյուղի հետ համատեղ իրականացվել են մայրաքաղաքի փողոցների, բակերի, խաղահրապարակների, զբոսայգիների արտաքին լուսավորման ցանցի շահագործման, պահպանման, վերանորոգման և հիմնանորոգման աշխատանքներ: Հիմնանորոգվել է Գ.Լուսավորիչ, Ա.Իսակով, Տիգրան Մեծ, Վ.Մամիկոնյան փողոցների արտաքին լուսավորման, մի շարք թաղամասերում /այդ թվում՝ Աջափնյակում/ վերակառուցվել համակարգը: Ստորգետնյա և օդային վթարված մալուխային գծերը փոխարինվել են ժամանակակից նոր գծերով: Մայրաքաղաքի չլուսավորվող հատվածներում իրականացվել են համապատասխան մոնտաժային աշխատանքներ, տեղադրվել են նոր լուսատուներ և հենասյուներ: Վերանորոգվել է 1460 լուսատու, մի շարք ենթակայաններում տեղադրվել են էլեկտրական նոր սարքավորումներ: Հաշվի առնելով մայրաքաղաքի արտաքին լուսավորման աշխատանքների համակարգման ու էլեկտրաէներգիայի խնայողաբար օգտագործման անհրաժեշտությունը՝ պարբերաբար վերահսկվում է լուսավորման համակարգի միացման-անջատման ռեժիմը:

Հողօգտագործում

2015թ. հասարակական նշանակության, անհատական տների և արտադրական նշանակության օբյեկտների կառուցման համար ընդունվել է թվով 183 որոշում, պետական /համայնքային/ սեփականություն հանդիսացող հողամասի կառուցապատման իրավունքի տրամադրման վերաբերյալ կնքվել՝ 156 պայմանագիր: Հողամասի վարձակալության համար կնքվել է 12, հողամասի ու անշարժ գույքի առուվաճառքի տրամադրման վերաբերյալ՝ թվով 352 պայմանագիր: Անց է կացվել Ստեփանակերտ քաղաքի պետական սեփականություն հանդիսացող հողամասերի թվով 2 բաց աճուրդ: ԼՂՀ գյուղատնտեսության նախարարության հետ համաձայնեցվել է կազմված հողային ֆոնդի առկայության և բաշխման հաշվետվությունը:

Մայրաքաղաքի հեռանկարային զարգացման ծրագրով՝ 2009թ. Ասկերանի շրջանի Խնածախ համայնքից Ստեփանակերտի համայնքին է հատկացվել 174,0 հեկտար հողատարածք: Սակայն առայսօր չլուծված է մնում Խնածախի համայնքի և առանձին սեփականատերերի փոխհատուցման հարցը /ընդհանուր գումարը կազմում է 155,0 մլն դրամ/, ինչի պատճառով հնարավոր չէ իրագործել նշված տարածքի հետագա կառուցապատման ու շահագործման աշխատանքները: Արեշ, Աջափնյակ և 38-րդ թաղամասերում կառուցապատումը բնականոն կերպով շարունակելու համար անհրաժեշտ է համալրել այդ թաղամասերի ենթակառուցվածքները /ճանապարհներ, ջրամատակարարում-ջրահեռացում, գազ, էլեկտրաէներգիա և այլն/:

Տրանսպորտ

Ստեփանակերտ քաղաքում ուղևորափոխադրումներն իրականացվում են թվով 5 ավտոբուսային, 3 միկրոավտոբուսային և մեկ հատուկ երթուղիների միջոցով, որոնք պայմանագրային հիմունքներով սպասարկվում են <<Ստեփանակերտ-սերվիս>> ՓԲԸ և <<Մհեր>> ՍՊԸ-ի կողմից: Հաշվետու ժամանակաշրջանում մի շարք երթուղիներում կազմակերպվել են շարժակազմերի համալրման աշխատանքներ: Ուսումնասիրվել և պարբերաբար ստուգվել է ընկերությունների կողմից ստանձնված պարտավորությունների կատարման ընթացքը, և տրվել են համապատասխան ցուցումներ՝ երթակարգավարական ծառայության բարելավման, շարժակազմերի արդյունավետ օգտագործման և ուղևորափոխադրման որակի բարելավման նպատակով: Ստուգումներ են անցկացվել նաև Ստեփանակերտի ներքաղաքային ավտոբուսային երթուղիներում: Միևնույն ժամանակ, աշխատանքների կազմակերպման ընթացքում ծագում են ոչ քիչ թվով խնդիրներ, որոնք խոչընդոտում են բնակչության առավել արդյունավետ սպասարկումը: Դեռևս լիարժեք համալրված չէ մայրաքաղաքի ավտոբուսային /միկրոավտոբուսային/ հավաքակազմը: Հատկապես շարունակում է ցածր մնալ հաշմանդամների տրանսպորտային սպասարկման մակարդակը:

Բազմաթիվ խախտումների, երթուղու ուղեգծի ինքնակամ շեղումների, չվացուցակին ոչ համապատասխան երթևեկություն իրականացնելու համար Ստեփանակերտ քաղաքում ուղևորափոխադրումներ իրականացնող «Մհեր» ՍՊԸ բազմիցս զգուշացվել է, իսկ պայմանագրային պարտավորությունների թերացման արդյունքում գոյացած 1 684 750,0 դրամ պարտքը բռնագանձելու նպատակով, գործերը հանձնվել են դատարան:

Իրավիճակի շտկման և կարգավորման գործում ակնկալում ենք էկոնոմիկայի նախարարության տրանսպորտային տեսչության կողմից վերահսկողության ուժեղացում՝ ոլորտում օրենսդրական պահանջների կատարման, հաստատված չվացուցակների ապահովման, երթուղու ուղեգծի ինքնակամ շեղումների բացառման, ավտովարորդների կողմից ուղևորների հանդեպ հարգալից վերաբերմունքի դրսևորման և անվտանգ սպասարկման ուղղությամբ:

Ելնելով ճանապարհային երթևեկության բարելավման և անվտանգության ապահովման պահանջներից, ինչպես նաև՝ համաձայն Ստեփանակերտ քաղաքի լուսացույցերի սպասարկման պայմանագրի, ԼՂՀ ԿԱ ԼՂՀ ոստիկանության ճանապարհային ոստիկանության համապատասխան մասնագետների հետ վերահսկվել է քաղաքում գտնվող լուսացույցային օբյեկտների վերանորոգման և սպասարկման աշխատանքների գործընթացը: Նորոգվել են թվով 10 լուսացույցային օբյեկտների կառավարման սարքեր, շուրջ 10 հազար քառ.մետրի վրա կատարվել է մայրաքաղաքի ավտոճանապարհների հորիզոնական գծանշում, ճանապարհային հին նշանները փոխարինվել են նորերով:

Ճանապարհային անվտանգ երթևեկության ապահովման կարևոր պայմաններից է հանդիսանում ավտոտրանսպորտային միջոցների տարեկան տեխզնումը: Ստեփանակերտ քաղաքում հաշվառված 9721 փոխադրամիջոցներից, ըստ տեխնիկական զննության կայանի տվյալների, 2015թ. զննություն է անցել 5624 փոխադրամիջոց: 4097 փոխադրամիջոց չի անցել տեխնիկական զննություն, ինչի արդյունքում՝ փաստացի վտանգվել է երթևեկությունը: Մինևույն ժամանակ, պետական և համայնքային բյուջե չեն մուտքագրվել զգալի ֆինանսական միջոցներ:

Աշխատանք և սոցիալական ծառայություն

2015թ. նպաստ ստանալու նպատակով հաշվառման է վերցվել 1118 քաղաքացի: Պետական նպաստից օգտվում է 3341 նպաստառու, որոնց տարվա կտրվածքով վճարվել է 788 մլն 873 հազար դրամ: Հաշվառման է վերցվել և խնայքանկում հաշիվներ բացվել բազմազավակ ընտանիքներում ծնված 3-րդ և հաջորդ՝ 217 երեխայի համար, և համապատասխան ավանդական հաշիվներին է փոխանցվել 116 մլն 600 հազար դրամ: Երեխայի ծննդյան միանվագ նպաստի վճարման նպատակով հաշվառման է վերցվել 1013 գործ և ֆինանսավորման գումարը կազմել է 219 մլն 800 հազար դրամ: Հաշվետու ժամանակաշրջանում ամուսնության միանվագ նպաստի համար վճարվել է 114 մլն դրամ: ԼՂՀ պաշտպանության ժամանակ հաշմանդամ դարձած զինծառայողներին և ԼՂՀ պաշտպանության ժամանակ զոհված զինծառայողների ընտանիքներին տրամադրվել է շուրջ 110 մլն դրամի միանվագ գումար: Հիշարժան օրերի կապակցությամբ ԼՂՀ բնակչության առանձին խմբերի վճարվել է ավելի քան 87 մլն միանվագ գումար՝ 2212 ընտանիքի հաշվով: Առողջարանային բուժման և հանգստյան տների ուղեգրերից օգտվել է 222 անձ: 152 նպաստառուի տրամադրվել են պրոթեզավորման պարագաներ, այդ թվում՝ թիկնասայլակ, լսողական սարք և այլն:

Առևտուր և ծառայություն

Հաշվետու ժամանակահատվածում, օրենքով սահմանված կարգով, համայնքի տարածքում ոգելից խմիչքների և ծխախոտի արտադրանքի վաճառքի համար տնտեսվարող սուբյեկտներին տրամադրվել է 483, առևտրի և հանրային սննդի օբյեկտները ժամը 24,00-ից հետո աշխատացնելու համար՝ 16, բացօթյա առևտուր իրականացնելու համար՝ 232, շրջիկ առևտուր իրականացնելու համար՝ 443, հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի վաճառքի համար՝ 14, տեխնիկական հեղուկների վաճառքի և թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի մանրածախ առուվաճառքի համար՝ 26 -ական թույլտվություն:

Պարբերաբար ուսումնասիրվել է տեղական տուրքերի գանձման ընթացքը, դիտարկվել տեղական տուրք վճարող սուբյեկտների գործունեությունը, կատարվել իրավիճակի վերլուծություն: Օրենսդրական պահանջներն ապահովելու, հետիոտնի և տրանսպորտի երթևեկին չխոչընդոտելու, քաղաքի գեղագիտական տեսքը պահպանելու, փողոցներում հակասանիտարական վիճակ չստեղծելու և բնակչության առողջությունը չվտանգելու նպատակով խստորեն վերահսկվել է բացօթյա ապօրինի առևտուրը և կանոնակարգվել օրենքով թույլատրվող ապրանքների բացօթյա վաճառքը: Համապատասխան ծառայությունների հետ համատեղ ստուգումներ են իրականացվել առևտրի և հանրային սննդի օբյեկտներում՝ պիտանիության ժամկետն անցած ապրանքների վաճառքի դեպքերը հայտնաբերելու, արգելելու և կանխարգելելու ուղղությամբ:

2015թ. քաղաքապետարանին կից գործող վարչական հանձնաժողովի կողմից ոչ սահմանված տեղերում առևտուր իրականացնելու համար տուգանվել է 27, արգելված տեղերում անասուններ պահելու համար՝ 3, առևտրի, հանրային սննդի և կենցաղային ծառայությունների ոլորտում առանց համապատասխան թույլտվության գործունեություն իրականացնելու համար՝ 6, շենքեր և շինություններ ինքնակամ կառուցելու համար՝ 3, պետական համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերն ինքնակամ զավթելու համար՝ 1, պիտանիության ժամկետն անցած ապրանքներ վաճառելու համար՝ 2, ընդհանուր օգտագործման տարածքներում բարեկարգման կանոնները խախտելու և շինությունը ոչ նպատակային օգտագործելու համար՝ 1 անձ:

2015թ. քաղաքի հասարակական նշանակության օբյեկտներում աշխատանքներ են տարվել գովազդային միջոցները գործող կանոնների պահանջներին համապատասխանեցնելու ուղղությամբ: Տուրքի մասով, գովազդի թույլտվության համար առաջադրանքը կատարվել է 126,4 տոկոսով: Համայնքի տարածքում գովազդի տեղադրման կարգին ու պայմանագրին ծանոթանալու և համապատասխան թույլտվություն ստանալու նպատակով, համայնքի ավելի քան 100 գովազդատուների ուղարկվել են գրություններ: Արտաքին գովազդի օրինականացման հարցով դիմել և համապատասխան որոշումներ է ստացել թվով 68 գովազդատու, որից 25-ը՝ արտաքին գովազդ տեղադրելու համար: 16-ը ուժը

կորցրած է ճանաչվել: Քաղաքապետի որոշման համաձայն, մինչև մեկ ամիս ժամկետով թույլտվություն է ստացել 17 գովազդատու: Ստեփանակերտ քաղաքում տեղադրված և համապատասխան թույլտվություն ստացած գովազդատուների քանակը հասել է 77-ի: Հաշվետու ժամանակաշրջանում իրականացվել է համայնքի փողոցներում տեղադրված ոչ պիտանի գովազդների ապամոնտաժման ծրագիրը: Արդյունավետ աշխատանքներ են տարվել, մասնավորապես, տոն օրերին մայրաքաղաքի արտաքին ձևավորումը պատշաճ հիմքերի վրա դնելու ուղղությամբ: Տեսարժան վայրերում տեղադրված էկրանների միջոցով բնակչությանը հնարավորություն է ընձեռնվել ծանոթանալու քաղաքապետարանի կողմից պատրաստված տեսահոլովակներին և շնորհավորական ուղերձներին:

Հասարակական կարգի պահպանություն

2015թ. ԼՂՀ ոստիկանության քաղաքային վարչությունը սերտ համագործակցել է քաղաքապետարանի հետ: Համայնքում կատարված իրավախախտումների վերաբերյալ քաղաքապետին պարբերաբար տրամադրվել է անհրաժեշտ տեղեկատվություն: Խնամակալության և հոգաբարձության մարմիններին օրենքով վերապահված լիազորությունների շրջանակներում հրավիրվել է հանձնաժողովի 30 նիստ: Կայացվել է 28 որոշում՝ անչափահասի գույքի օտարման, պատրոնաժ, խնամակալություն և հոգաբարձություն սահմանելու մասին: Երեխաների շահերին վերաբերող դատական գործերով տրվել է 33, երեխաների խնամքի և պաշտպանության գիշերօթիկ հաստատությունում տեղավորելու մասին՝ 4, հաստատությունից դուրս գրելու մասին՝ 5, մանկատներում տեղավորելու վերաբերյալ՝ 2 եզրակացություն: Երեխայի որդեգրման վերաբերյալ /որպես որդեգրել ցանկացող անձի/, տրվել է 2 դրական եզրակացություն:

Ստեփանակերտի քաղաքապետարանին կից անչափահասների գործերով հրավիրվել է հանձնաժողովի 11 նիստ, արդյունքում՝ 29 անչափահաս վերցվել է հաշվառման, իսկ 28-ը՝ հանվել հաշվառումից:

Պաշտպանություն

Առաջնորդվելով 2015թ. քաղաքապետության հիմնական միջոցառումների պլանով, ինչպես նաև ՔՊ պետի ու ղեկավար մարմինների որոշումներով և կարգադրություններով, համապատասխան գործունեություն է ծավալվել Ստեփանակերտի ՔՊ համակարգում՝ բնակչության և տարածքների պաշտպանության խնդիրների լուծման ուղղությամբ: Ճշգրտվել է Ստեփանակերտի ՔՊ պլանը և խաղաղ ժամանակի ՔՊ ուժերի և միջոցների, բնակչության պատասպարման հաշվարկը: 2015 թվականին, ընդհանուր առմամբ, անցկացվել է 22 զորավարժություն:

Կառույցի կողմից բավարար աշխատանքներ են տարվել համայնքի տարածքում հակահրդեհային միջոցառումների ապահովման ուղղությամբ: Հաշվետու ժամանակաշրջանում Ստեփանակերտում գրանցվել է 246 հրդեհի դեպք կամ նախորդ տարվա համեմատ հիշյալ արտակարգ պատահարների թիվն աճել է 42-ով: Հիմնականում հրդեհների աճ է գրանցվել բուսածածկ տարածքներում, ինչին զվիսավորապես նպաստել է աննախադեպ տևական երաշտը: Մինևույն ժամանակ՝ հրդեհներից գոյացած վնասի չափը նախորդ տարվա համեմատ նվազել է մոտ 4 մլն դրամով:

Քաղաքացիների և տնտեսավարող սուբյեկտների իրավունքների պաշտպանություն

2015թ. ԼՂՀ դատարաններում ապահովվել է Ստեփանակերտի քաղաքային համայնքի լիազոր ներկայացուցչի մասնակցությունը դատական նիստերին: Ընդդեմ Ստեփանակերտի քաղաքապետարանի հարուցված 12 քաղաքացիական գործերով /վնասի հատուցման, իրավունքի ճանաչման և վերականգնման վերաբերյալ/ հարցերից 10-ը մերժվել է: 23 վարչական գործերով /հողհատկացման, բնակարանային հերթերի, սեփականաշնորհման վերաբերյալ/ 12 հայցապահանջները բավարարվել են, 3 գործերով վարույթները կարճվել են՝ հայցվորների հայցից հրաժարվելու հիմքով, 8 գործով՝ մերժվել: 38 քաղաքացիական գործերով ապահովվել է մասնակցությունը դատական նիստին՝ որպես երրորդ անձի ներկայացուցիչ:

2015թ. ԼՂՀ նախագահի և կառավարության աշխատակազմերից, ԼՂՀ Ազգային ժողովից և ԼՂՀ պետական այլ կառույցներից, ինչպես նաև քաղաքացիներից ստացվել են 5034 գրություններ և դիմում-բողոքներ: Նշված ժամանակահատվածում ընդունվել է քաղաքապետի 2180 որոշում և 260 կարգադրություն, համայնքի ավագանու 72 որոշում: Ամենատարբեր հարցերով քաղաքապետի մոտ ընդունելության է գրանցվել շուրջ 2000 քաղաքացի: Տարվա կտրվածքով մուտքագրվել են ԼՂՀ 66 օրենք, ԼՂՀ նախագահի 5 հանձնարարական, ԼՂՀ վարչապետի և կառավարության 97 որոշում, ԼՂՀ վարչապետի 1 արձանագրային հանձնարարական, որոնք սահմանված կարգով ծանոթացման են ներկայացվել աշխատակազմի պատասխանատու աշխատողներին, և իրականացման նպատակով տրվել են համապատասխան հանձնարարականներ: Սահմանված կարգով ժամանակին հաշվառվել են էլից գրությունները, կազմակերպվել վերջիններիս առաքումը՝ հասցեատերերին:

Օրենքի շրջանակներում համակարգվել են քաղծառայողների վերապատրաստման, ատեստավորման և մրցույթի կազմակերպման հետ կապված աշխատանքները: Անց է կացվել թվով 7 մրցույթ, ատեստավորվել՝ 15 քաղծառայող: 23 քաղծառայողներ անցել են վերապատրաստման դասընթացներ:

Կրթություն, մշակույթ, երիտասարդության հետ տարվող աշխատանքներ

Հաշվետու ժամանակաշրջանում աշխատանքներ են տարվել սովորողների կրթության գործընթացը պատշաճ մակարդակով կազմակերպելու, հիմնարկների նյութատեխնիկական բազան հարստացնելու, նոր տեխնոլոգիաների մուտքը համակարգ խթանելու, ուսումնական պարապմունքների, արտադասարանական-արտադպրոցական և սպորտային միջոցառումների նպատակային կազմակերպման ուղղությամբ:

Հանրակրթական առարկաների նկատմամբ հատուկ կարողություններ ունեցող և առանձնակի հետաքրքրություն ցուցաբերած սովորողների վերհանման, ինչպես նաև գիտության հիմունքների ուսումնասիրման նկատմամբ՝ աշակերտների շրջանում հետաքրքրությունը բարձրացնելու նպատակով, 13 ուսումնական առարկաներից կազմակերպվել են օլիմպիադաներ, որոնց

արդյունքներով քաղաքային փուլում՝ 112, հանրապետական փուլում՝ 53, իսկ ՀՀ-ի եզրափակիչ փուլում՝ 16 մասնակիցներ գրավել են մրցանակային տեղեր, խրախուսվել գովասանագրերով, պատվոգրերով և դիպլոմներով:

Մայրաքաղաքի կրթական հաստատությունները հիմնականում ապահովված են բարձրագույն մանկավարժական և համապատասխան մասնագիտական կրթություն ունեցող կադրերով: Աշխատող 947 մասնագետներից 891-ն ունեն բարձրագույն, իսկ 56-ը՝ միջնակարգ մասնագիտական կրթություն: Ուսուցիչների մասնագիտական, մեթոդական ու մանկավարժական վարպետության բարձրացման նպատակով շուրջ 78 ուսուցիչ-մասնագետներ ընդգրկվել են վերապատրաստման դասընթացներում:

Հաշվետու ժամանակահատվածում ուշադրության կենտրոնում են գտնվել սովորողների հայեցի դաստիարակության ուղղությամբ տարվող հարցերը: Կազմակերպվել են տարաբնույթ միջոցառումներ՝ սովորողների գիտական մակարդակի բարձրացման, գիտակցական կարգապահության, հայրենասիրական ու գեղագիտական դաստիարակության ապահովման նպատակով: Անց են կացվել «Վերջին զանգ», «Առաջին զանգ», «Ուսուցչի օր», «Ոսկե աշուն», «Մայրենիի օր», «Այբուբենի տոն», «Անկախության օր», «Ստեփանակերտի օր», «Տարվա լավագույն տնօրեն», «Տարվա լավագույն ուսուցիչ», «Տարվա լավագույն զինղեկ», «Տարվա լավագույն դաստիարակ», «Տարվա լավագույն աշակերտ» մրցույթները, ինտելեկտուալ խաղեր, ասմունքի ու ստեղծագործական շարադրությունների մրցույթներ և այլ տարաբնույթ միջոցառումներ, որոնց արդյունքներով հաղթող ճանաչվածները խրախուսվել են:

Կազմակերպված է անցել դպրոցականների ամառային հանգիստը: Հ. 5 և հ 10 դպրոցների բազայի վրա ստեղծվել են ամառային ճամբարներ, որտեղ ընդհանուր հաշվով հանգստացել է 460 երեխա: Շուշիի «Հայկի սերունդ» ճամբարում ընդգրկվել է 150 երեխա, Սևանի երկրապահների միության ճամբարում՝ 35, Ծաղկաձորի ճամբարում՝ 55: Բարձր դասարանների տղաներն ընդգրկվել են Այգեստանի «Վարդանանք» ռազմամարզական ճամբարում:

Ուշադրության կենտրոնում են գտնվել սովորողների ֆիզիկական դաստիարակության, նրանց շրջանում սպորտի և ռազմամարզական խաղերի

հետագա մասսայականացման հարցերը: Այդ նպատակով կազմակերպվել ու անց են կացվել տարաբնույթ քաղաքային առաջնություններ և մրցույթներ /<<Արծվիկ>> ռազմականացված հնգամարտ, հրաձգություն՝ ավտոմատ Կալաշնիկովից, <<Պատանի փրկարարներ>> և այլն/, որտեղ մեր մարզիկները գրավել են մրցանակային տեղեր և իրավունք ստացել մասնակցելու հանրապետական փուլին:

Ընդհանրացվել են ուսումնական հաստատությունների տնօրենությունների, առարկայական մեթոդափափորումների կողմից կատարված աշխատանքները և քննարկվել ուսուցիչների օգոստոսյան խորհրդաժողովում, ուր մատնանշվել են նոր՝ 2015-2016 ուս.տարվա անելիքներն ու խնդիրները: Հանրագումարելով 2015-ի արդյունքները և հաշվի առնելով նախադպրոցական համակարգում նոր 2 մանկապարտեզների շահագործման հանձնելու, հ.9 հիմնական դպրոցի հիմնարար վերանորոգման ու հ.12 դպրոցի ջեռուցման համակարգի մոնտաժման աշխատանքները սկսելու հանգամանքը, 2016թ. ևս առաջնահերթ կմնան հ.10 հիմնական դպրոցի հիմնարար վերանորոգման, Աջափնյակի հ. 12 դպրոցի մասնաշենքի չօգտագործվող մասի մանկապարտեզի վերակառուցման, դպրոցի շենքի տանիքի վերանորոգման և մարզադահլիճի կահավորման հարցերը:

2015թ. հազեցած է եղել նաև մայրաքաղաքի մշակութային կյանքը: ԼՂՀ մշակույթի և երիտասարդության հարցերի նախարարության աջակցությամբ քայլեր են ձեռնարկվել մշակութային միջոցառումների որակի բարելավման և արդյունավետության բարձրացման ուղղությամբ, իրականացվել են մի շարք նոր ծրագրեր: Պատշաճ մակարդակով են անցել Ամանորին, Սուրբ Սարգիս զորավարի տոնին, Հայրենյաց պաշտպանի և Արցախի Վերածննդի օրվան, Մայիսյան եռատոնին, ԼՂՀ անկախության հռչակման տարեդարձին, Ստեփանակերտի օրվան ու Երիտասարդների միջազգային օրվան նվիրված միջոցառումները: Մշակույթի քաղաքային տան և հասարակական կազմակերպությունների հետ համատեղ նշվել են <<Տրնդեզն>> ու <<Սուրբ Զատիկը>>: Կազմակերպվել են երգի ու ասմունքի փառատոներ, տոնական համերգներ և մի շարք ցուցահանդեսներ: Ավանդույթ է դարձել երիտասարդական արշավների կազմակերպումը՝ Արցախի պատմամշակութային հուշարձաններ ու վանքեր, որոնք վերածվում են

յուրահատուկ ուխտագնացության: Շարունակվել է ակտիվ համագործակցությունը՝ մայրաքաղաքի երիտասարդական, ստեղծագործական և հասարակական կազմակերպությունների հետ:

Տարվա հիշարժան իրադարձություններից կարելի է համարել Ստեփանակերտի օրհներգի ընդունումը, որի վերաբերյալ որոշումը կայացվել է մրցութային հանձնաժողովի եզրակացության և հանրային քննարկումների արդյունքում:

Տիզիկական կուլտուրա և սպորտ

2015թ. մարզական միջոցառումներն իրականացվել են նախապես հաստատված աշխատանքային օրացուցային պլանով: Տարբեր մարզաձևերից քաղաքային առաջնություններում առաջնակարգ տեղեր զբաղեցրած թիմերը մասնակցել են հանրապետական մրցումներին: Ավանդական են դարձել հիշարժան օրերին նվիրված տոնական մարզական միջոցառումները, որոնք, մասնավորապես, անց են կացվում Հայրենիքի պաշտպանի օրվա, Մայիսյան եռատոնի, Անկախության օրվա, Տիզկուլտուրնիկի և Քաղաքի օրվա կապակցությամբ: Անցած ժամանակաշրջանում կազմակերպվել են 24 մարզական միջոցառումներ՝ բասկետբոլի, վոլեյբոլի, հանդբոլի, մինի ֆուտբոլի գծով: Ստեփանակերտ քաղաքում անցկացվել են մարզական փառատոներ և «Լավագույն մարզական ընտանիք» մրցումներ: Կոլեկտիվների միջև կազմակերպված բասկետբոլի, վոլեյբոլի, ֆուտբոլի, հանդբոլի թիմային մրցումների ժամանակ ի հայտ են բերվել Ստեփանակերտի լավագույն թիմերը, որոնք մասնակցել են հանրապետական առաջնություններին: Ստուգատես-մրցույթում 1-ին պատվավոր տեղը զբաղեցրած թիմերը պարգևատրվել են նվերներով ու պատվոգրերով:

Արտաքին կապեր

Տարեցտարի ընդլայնվում է մայրաքաղաքներ Երևանի և Ստեփանակերտի միջև սկզբնավորված համագործակցությունը: 2012թ. սեպտեմբերի 28-ին երկու մայրաքաղաքների քաղաքապետների կողմից ստորագրված համաձայնագրի շրջանակում բոլոր ուղղություններով ավելի են սերտանում կապերը: Երևանի քաղաքապետարանն ակտիվ աջակցություն է ցուցաբերում քաղաքային

տնտեսությանը՝ կառավարման ոլորտում: Այն իր փորձն է հաղորդում քաղաքապետարանի բաժիններին՝ գործառույթների կատարելագործման, տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացման, եկամուտների հաշվառման և հավաքագրման, հարկային դաշտի ուսումնասիրման և այլ բնագավառում:

Հատկանշական է, որ փոխգործակցությունը չի սահմանափակվում երկու քաղաքապետարանների պատասխանատուների փոխայցելություններով և Ստեփանակերտի հետ ամուր կապեր են հաստատել նաև Երևանի վարչական բոլոր 12 շրջանները: 2015թ. համագործակցության շրջանակներում պատվիրակությունների կողմից շուրջ երկու տասնյակ փոխայցելություններ են կատարվել և հստակեցվել անելիքները, նախանշվել առաջնահերթությունները: Քայլեր են ձեռնարկվում գործընկերային հարաբերություններն առավել սերտացնելու և կայուն հիմքերի վրա դնելու համար: Երևանի քաղաքապետարանի կողմից Ստեփանակերտին են նվիրաբերվել գեղարվեստորեն ձևավորված նստարաններ և աղբամաններ, տեղեկատվական շտեմարան՝ ծրագրով համալրված ժամանակակից համակարգիչներ: Երևանի վարչական շրջաններն իրենց հերթին մայրաքաղաքի նախադպրոցական հիմնարկներին նվիրել են երաժշտական կենտրոններ, համակարգիչներ, ննջարանային պարագաներ և գույք, խոտինձիչ ագրեգատներ և այլն:

Երևանի քաղաքապետարանի աջակցությամբ Ստեփանակերտում շարունակվում են «Ազատամարտիկների այգու» հիմնադրման և կառուցվող Աստվածամոր Սուրբ Հովանի մայր տաճարի հարակից տարածքների բարեկարգման և կանաչապատման աշխատանքները: Բարեկամության հետագա ամրապնդմանն, անշուշտ, նոր լիցք կհաղորդի երկու քաղաքապետարանների միջև անցյալ տարվա աշնանը Երևանում ստորագրված 2015-2020թթ. համագործակցության ծրագիրը, ինչը լայն հեռանկարներ է խոստանում:

Կապերի ամրապնդման և խորացման ուղղությամբ գործուն քայլեր են ակնկալվում Ստեփանակերտի և Կալիֆոռնիայի նահանգի Մոնթբերելլո, Ֆրանսիայի Վալանս քաղաքների միջև սկզբնավորված համագործակցության շրջանակում:

Ս.ԳՐԻԳՈՐՅԱՆ
Քաղաքապետ